

ԳԵՐ. Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՇՅԱՆ

Ավազանի անունով՝ Հովհաննես: Ծնվել է 1933 թվականի նոյեմբերի 28-ին Հալեպում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Կիլիկյան վարժարանում: 1948 թվականին ընդունվել է Անթիլիասի Կիլիկյան Կաթողիկոսության դպրեվանք, որն ավարտելով՝ կուսակրոն քահանա է ձեռնադրվել և վեղար ստացել 1955 թվականի նոյեմբերի 20-ին՝ ձեռամբ տ. Խաչ արքեպ. Աջապահյանի՝ վերանվանվելով Գյուտ աբեղա:

1958 թվականին ս. Էջմիածնում ստացել է վարդապետական մասնավոր աստիճան և լանջախաչ:

1955—1960 թվականներին ուսուցչական պաշտոններ է վարել Բեյրութի Թեքեյան, Սահակյան և նոր բարձրագույն վարժարաններում:

Այդ ընթացքում սրբազանը հովվական ծառայություններ է մատուցել Բեյրութի և Կիպրոսի հայկական եկեղեցիներում:

1960 թվականի հոկտեմբերի 15-ից՝ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հրավերով պաշտոնի է անցել Փարիզում, նախ որպես հոգևոր հովիվ ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում և ապա՝ որպես Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ իր ծառայությունը բերելով Եվրոպայի բոլոր հայ համայնքներին:

1965 թվականի փետրվարին Փարիզում ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան՝ տվչությամբ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

1973 թվականի սեպտեմբերի 30-ին ձեռնադրվել է եպիսկոպոս՝ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից: